ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԻՇՄԻՇԵԱՆՑԻ

Ամեն ժամանակներում, մարդկային ազգի զարդացման որոշ աստիճանի վերայ գտնելիս, շատ բոյսեր ունեցել են առանձին խորհրդաւոր նշանակութիւն և մարդիկ նոցա իբրև սրբութիւն պաշտելիս են եղել։ Որովհետև նախկին մարդուն լատուկ էր իւրաքանչիւր իրան չրջապատող առարկայ բացատրել իւր հասկացողութեան համաձայն, այս պատճառով բոյսերի խորհրդաւոր նշանակութիւնն և նոցա սրբազան մեծարանքը փոփոխւում էր համեմատ մարդուս զարդացման աստիճանին։ Ցալանի գիտնական Տէյլօրն իւր «Կրթութեան ծագումն» անուն երկասիրութեան մէջ դուրս է բերած բոյսերի պաշտօնի կամ մեծարանքի հետզհետէ զարդացման մի քանի աստիճանները։ Նորա ասելով մի քանի ազգեր կարծում են թէ ծառն ունի բանական էակի բոլոր որակութիւններն ու լատկութիւններն և հետևապէս կարող է ըստ իւր կամաց վնասել կամ պաշտպանել մարդուն. թէ նորա մէջ չար ոգիներ են լառաջացել և իբրև թէ ծառը կարող է լինել հանգիստ առնելու մի վայր, ուր հաճութեամբ իջնում է մի որ և է երկնային ոգի. ուստի և ծառերի չրջակալքը շատ լարմար տեղ էին համարում աղօթարաններ չինելու և զոհեր մատուցանելու ի պատիւ նոցա մէջ բնակող ոգիների։

Սրկրպագութեան և մեծարանաց զարդացման այս վերջին աստիճանում միակերպ սրբազան էին համարում թէ առանձին առած ծառերն և թէ ամբողջ անտառները, ուր մարդիկ անխտիր կանգնեցնում էին հնումն իրանց աղօթարանները։

Եթէ առանձին ծառերը կամ ամբողջ անտառը մարդուս աչքում սրբազան էին համարում, ոչ պակաս պաշտելի էին նորա համար և ծաղիկները։ Մարդս՝ պաշտելի Աստծու ուշադրութեանն արժանանալու կամ նորա ցասումը մեղմացնելու համար, նորան ծաղիկներ էր մատուցանում կամ զոհում էր նորան իւր այգու կամ պարտիզի երեխայրիքը։ Ցետագայ ժամանակներում՝ մարդս իւր զարդացման աւելի բարձր աստիճանի վե-

բալ, ծաղիկներին տալ է խորհրդաւոր նշանակութիւն և նոցանով հմայելով՝ գուշակել էր իւր բաղդն ու վիճակը։

Ներկայ յօդուածում մտադիր ենք համառօտակի յառաջ բերել ծաղիկների, ծառերի և առհասարակ անտառի խորհրդաւոր և սրբազան նշանակութիւնն, որ տեղի է ունեցել մարդկային ազգի զանազան ցեղերի այնքում՝ նոցա մի որոշ զարգացման աստիճանի վերայ եղած ժամանակ։ Սորան կից յառաջ կը բերենք մեր ազգի հեթանոսական շրջանից սկսած մինչև մեր ժամանակները բուսական թագաւորութեան տված յարգանքը, ի հարկէ որքան մեզ կը ներեն այն կցկտուր և կարճ տեղեկութիւններն՝ որ ցրուած են մեր հին և նոր գրականութեան մէջ, չը խորշելով և բանաւոր աւանդութիւններից, որ պտտում են այժմ մեր ժողովրդի մէջ։ Պարտք ենք համարում սակայն մեր ասածներին աւելացնել և այն՝ որ այս դէպքում ձեռնպահ պիտի մնանք մեր յառաջ բերած փաստերին որ և է բացատրութիւն տալու, այլ պիտի բաւականանանք այդ փաստերն ընթերցողին իբրև տեղեկութիւնների ժողովածու ներկայացնելով։ Խոստովանում ենք որ մեր ժողոված փաստերը չատ թերի են, մանաւանդ ազգային աւանդութիւնների վերաբերմամբ, որովհետև սոցա ի մի ժողովելն և լաւ ընծայելն ազգին աւելի ծանօթ և ազգային մատենագրութեան աւելի հմուտ անձի գործ է։

Բոլոր ազգերից՝ արևելեան ժողովուրդների այնքում ծաղիկները աւելի մեծ նշանակութիւն ունեն, աւելի պաշտելի են, արժանանալով նոցա առանձին ուշադրութեան։ Մանաւանդ Պարսկաստանում և Հնդկաստանում իւրաքանչիւր ծաղիկ որ և է գաղափարի նշան է։ Օրինակի համար՝ Հնդկաց կրօնի մէջ դոնաւոր և հոտաւէտ ծաղիկները ամենից շատ էին յարգւում և արժանանում աստուածներին նուիրաբերուելու. այն ինչ տերևներ և հասարակ ծաղիկները զոհւում էին կամ պատմական նշանակութիւն ունեցող հանգամանքներում կամ եթէ այդ բոյսերի տերևներն ու ծաղիկները կապ ունէին որ և է խորհրդաւոր առարկաների հետ։ Այսպէս՝ Տրիմուրտի կամ երրորդութեան ներկայացուցիչ աստուածուն նուիրած էին երկու բոյսեր, որ մեր առուտի (նանջալի) նման երեք տերև ունին և նշանակում են երրորդութիւն։ Կրիշնու և Վիշնու աստուածներին նուիրած է մեր ռէհանի տեսակից մի բոյս, որ ունի սպիտակ և անուշահոտ ծաղիկներ. վասն որոյ այդ բոյսն առանձին պատուի արժանանալով գործ է դրւում ամենայն օր զոհաբերութեան ժամանակ։ Աւանդութեամբ Կրիշնուն Բրինդաբունի կաթնավաճառ աղջկանց հետ խաղացել է կադամբա կոչած ծառի տակ, որի գնդաձև գեղին ծաղիկները յատկապէս նորան են նուիրած։ Հնդկաստանում այդ ծաղիկները սրբազան են համարում, ուստի նոքա նկարած ու քանդակած են շատ

թանկագին իրերի և առարկաների վերայ։ Աւանդութեամբ նոյն Պրիշանուն իւր սրնգի նւագով ցափշտակում էր կաթնավաճառ աղջկանց Բակուլա կոչուած ծառի տակ. ուստի այժմ այդ բոյսի ղեղին և անուշահոտ ծաղիկները նւիրւած են Նորան և Սիպլին։ Մի ծառ ևս՝ որ կոչւում է պէրէջատի, համարւում է խորհրդաւոր բայց ոչ սրբազան։ Սորա ծաղիկները ծաղկում էին Ինդրայի պարտէզում, երկնքում։ Կրիշանուի երկու ամուսինները վիճում էին թէ նոցանից որին է պատկանում այդ ծաղիկն որ դողացել է նոցա ամուսինն երկնային պարտէզից։ Այն օրից, երբ Կրիշանուն դողացաւ այդ ծաղիկը, սա անիծւեց և մնաց երկրի վերայ իբրև բոլոր ծաղիկներից վատթարագոյնը. ուստի և այդ ծաղիկը չէ գործածւում զոհաբերութեանց ժամանակ։

Հնդկաց առասպելաբանութեան մէջ Կամադևան ինչպէս Կուպիդոնը սիրոյ Աստուած է և նոյնպէս նկարւած է նեա ու աղեղով։ Առասպելը պատմում է՝ որ նորա նետերը շրջապատւած են հինգ տեսակ նւիրական ծաղիկներով. նոյն Կամադևային նւիրւած է պանդանգ բոյսն, որի ծաղկափոշին անուշահոտ է։ Այդ ծաղկափոշին հաւաքում են և ի վաճառ հանում, որովհետև հարսանեաց օրն այդ ծաղկափոշին դարձ է ածւում նորապսակների վերայ թափելու համար։

Առհասարակ այն բոլոր ծաղիկներն որ իրանց զանով, գեղեցկութեամբ և հոտով աչքի են ընկնում, արևելեան ազգերը նւիրաբերում են աստուածներին։ Այս պատճառով Հնդկաստանում իւրաքանչիւր մի այդպիսի ծաղիկ տաճարի դրանը կանգնած սալանիս կոչւած ծաղկավաճառները առաջարկում են հաւատացեալներին, որ գնում են աստուածներին նւիրաբերութեան համար։ Իսկ այն վերոյիշեալ յատկութիւններ չունեցող ծաղիկներն առասպելական աւանդութիւնների մէջ սովորաբար վերաբերւում են կամ աստուածութեան հետ կապ ունեցող որ և է հանգամանքին կամ աւանդութիւնը այդպիսիներին տալիս է որ և է խորհրդաւոր նշանակութիւն այն աստուածու յատկանիշներին, որին այդ ծաղիկները նւիրւած են։

Հնդկաց և մանաւանդ Եգիպտացւոց առասպելաբանութեան մէջ մեծ նշանակութիւն ունէր լոտոս բոյսը. որ շատ նման է մեր հարսնամատին (նունուֆարին)։ Լոտոսն եգիպտացւոց ամենասիրելի ծաղիկն էր և նորանից նոքա կազմում էին պսակներ և փնջեր։ Այդ ծաղիկը նեղոս գետի աստուածը համարելով, հին ժամանակներում նկարւում էր շատ յիշատակարանների վերայ, որ այժմ իսկ պահպանւած են։ Լոտոսն ինչպէս և մեր հարսնամատն ունի անթիւ նեղ և սպիտակ թերթեր. երբ արևը մայր էր մտնում, թերթիկները ծածկում էին վարսանդի գլուխը, իսկ երբ արևը ծագում էր—թերթիկները բացւում էին և ծաղիկն երևում էր ջրի երեսին։ Մեր քեռ թողահայր Մովսէս Խորենացին իւր աշխարհագրութեան մէջ այդ ծաղկի առասպելական յատկութեան մասին գրում է հետևեալը՝ «Լինի Ափրիկէ բանջար ինչ լոտաս անուն, զոր թէ ուտէ ոք՝ զհալբենին ոռանայ։

Լուսասը թէ Եգիպտոսում և թէ Հնդկաստանում սրբազան էր համարւում և նշանակ էր պտղաբերութեան։ Ուստի Հորուս աստուածն որ ծագող արեգական պատկերն էր համարւում, զարդարւած էր այդ բոյսի ծաղիկներից կամ կոկոններից կազմած պսակով, իսկ երբեմն էլ այդ աստուածը պատկերացնում էր ջրից բարձրացող լուսասի ձեւով։

Յունաստանի և Հռոմի առասպելների մէջ ծաղիկներին առանձնապէս մեծ նշանակութիւն չէ յատկացրած և աւանդութիւններից շատերը խօսում են միայն մի քանի բոյսերի ծագման մասին։ Օրինակի համար՝ կարելի է լիշել պատանի Նարդիսին, որ իւր պատկերն աղբիւրի մէջ տեսնելով սիրահարւել է նորա գեղեցկութեան, բայց իմանալով որ իւր սիրոյ այդ առարկան չի կարող ձեռք բերել, լուսահատութիւնից ինքն իրան սպանում է։ Պատանու արիւնը ծաղկի է փոխարկւել և այն ժամանակից կոչւում է Նարգիս, կրելով այն պատանու անունը։ Յաւէրժահարսները նորա մարմինն ալրելու համար խարոյկ են պատրաստում, բայց նորա դիակի փոխարէն՝ ածիւնի մէջ ծաղիկ են գտնում։

Դափնին՝ Ապոլոնից հալածւած՝ վախենալով որ նորա ձեռքը չ'ընկնի, աղերսում է աստուածներին իրան պաշտպանել, ուստի փոխւում է դափնի ծառի։ Ապոլոնն այդ ծառի տերևներից պսակ է դնում իւր գլխին և հրամայում է այդ ծառն իրան նւիրել։ Այս պատճառով Ապոլոնի տօնախմբութիւններին, որ տեղի էին ունենում ինը տարին մի անգամ, դափնի էին դործ ածում։

Ադոնիս՝ Աստղիկի սիրեկանը, որսի ժամանակ վարազից վիրաւորւած մեռնում է։ Աւանդութիւնն ասում է՝ որ երբ Աստղիկն իւր սիրելոյ մահւան պատճառով սաստիկ վշտացած արտասւում է նորա դիակի վերայ, Ադոնիսի արիւնը վարդի է փոխւում, իսկ դիցուհու արտասունքն ադոնիս ծաղկի, որ հայերէն կոչւում է վարդակակաչ։

Ի պատիւ Դիմէտրէ դիցուհուն նւիրւած սրբազան հանդէսներում աթէնացի տիկինները զարդարում էին իրանց անկողինը Դոտեաց ճանկ կոչւած բոյսի տերևներով, որպէս զի այդպիսով հեռացնեն իրանցից գայթակղեցուցիչ մտքերը։ Սոյն բոյսն այն հիման վերայ լատիներէն կոչւում է vitex agnus castus, որ նշանակում է ողջախոհ գառն։ Հին բժշկները գործ էին ածում այդ բոյս իբրև անարատութիւն պահպանելու մի միջոց [1]։ դուստր Միռայի արտասուքն է, որովհետև այդ աղջիկը պաժւելով իւր հօրը չափազանց սիրելուն համար, փոքր թփի փոխւեցաւ։

Զմուռս՝ որ Արաբիայում բուսնող մի ծառից ծորող անուշահոտ և լեղահում խէժ է, ըստ աւանդութեան Կիպրոսի թագաւոր Կինարոսի

---

[1]) Գալենթաբանի հին բժշկարանում որ ապւած է Ն. Նախիջևանում 1793 թ. այս բոյսի մասին ասւած է՝ սերմն և տերևն նոքին է դեղ ընդդէմ ցաւոյն վաւաշտութեանն։

Շատ տեսակ աւանդութիւններ կան նաև ծառերի մասին։ Հին ազգերի առասպելների մէջ անխտիր կրկնւում է որ եղել են առանձին յատկութիւններ ունեցող ծառեր որ պաշտպանում են օձից։ Նա ով կը խմէր այդպիսի ծառերի պտղի հիւթը, երբէք չէր մեռնիլ։ Մանաւանդ սրբազան էր համարւում թէ կաղնի ծառն և թէ նոճին, որովհետև այս վերջինի սաղարթը ձմեռն անգամ չէ թափւում։ Նոճին ընդհանրապէս մեծարւում էր պարսկաստանում, իսկ Ամերիկայի հնդիկներն այդ ծառը սրբազան համարելով կախում են նորա զանազան նուիրաբերութիւններ։ Յունաստանում նոճիները համարւում էին Էթէոչի դասերք, որոց դիցուհին արհամարհում էր, որովհետև նոքա մրցում էին իրանց մոր հետ գեղեցկութեամբ։

Մրտենին նոյնպէս սրբազան բոյս էր. նա Արէս պատերազմական Աստուծու նշանակն էր. վերջը գործ էր դրւում Աֆրոդիտէի պսակի մէջ, երբ այդ դիցուհին ծովից դուրս գալով սա տիրաներից հալածւած՝ թաց կացաւ մրտենեաց մէջ։ Արևելքում մինչև այժմ այդ բոյսը սրբազան է համարւում. հրէաները մինչև օրս գործ են ածում այն տապանակի տօնին, իսկ արաբացիք համարում են այն երեք առարկաներից մին որ իբր Աղամը դուրս է բերել դրախտից։

Հիւսիսային Եւրոպայի ազգերի առասպելաբանութեան մէջ հացենին տիեզերական ծառ էր։ Գերմանիայում լորենին կիւրակի օրան նուիրւած ծառ էր համարւում. իսկ թեղօշնու մախրին (եղևինը) սրբազան ծառեր էին այդ երկրի շատ ազգերի համար։ Սուրբ Մարտինը Ֆրանսիայում հեթանոսական մեհեանները տապալելիս ձեռք չը տուաւ թեղօշի անտառներին։

Ձիթենին դեռ մարդկութեան սկզբնաւորութիւնից յայտնի է և նորա գեղեցկութիւնը յաճախ լիշւում է Ս. գրոց մէջ։ Ձիթենին անտարակոյս թէ քրիստոնէից և թէ հրէից մէջ սրբազան լիշատակներ է յարուցանում, որովհետև այդ պատմական բոյսը կապւած է Քրիստոսի երկրաւոր կեանքի հետ. ուստի և ձիթենին մեծ պատիւ է վայելում դոցա աչքում ևս հաւասարապէս։

Վերջապէս սրբազան տօների ժամանակ աստուածներին զանազան պտուղներ էին նուիրում, ինչպէս Բաքոսին գինի և մինչև անգամ պտուղներ և ծաղիկներ։

Այժմ դառնանք մեր ազգային այն աւանդութիւններին որ վերաբերում են մեր ազգի հեթանոսական ժամանակ բոյսերին ցոյց տւած յարգանքներին։

Հայոց հեթանոսութեան ժամանակ, երբ Բագրևանդայ դաշտում կատարւում էր Նաւասարդի տօնը, անշուշտ այդ տօնի հանդէսների ժամանակ

---

[1]) «Թարգմ. Աղվաղ», մասն երկրորդ, երես 45.

բուսական թագաւորութեան ներկայացուցիչները մեծ ծառայութիւն էին մատուցանում հանդիսակատարներին։ Այդտեղ բաղաւան կամ դիցաւան կոչւած աւանում կանգնած էր Ամենաբեղ Աստուծու արձանը, որ շատ սիրելի և պաշտելի էր Հայաստանում։ Նա համարւում էր պտուղների խնամակալ և տարին մի անգամ՝ Հայաստանում բերքերի հասունանալու ժամանակ, հաւաքւում էր և հայ հեթանոս ժողովուրդը աշխարհախումբ մի ասն էր կատարում նաւասարդ ամսի մէկից մինչև վեցը. և որովհետև Ամենաբեղ Աստուծու տօնը տարեգլխին էր ընկնում, ուստի այդ տօնն անուանում էին և՝ Ամանոր, որ նշանակում է տարին նորոգող։ Այդ տօնե-րին հեթանոս հայ այդեպանը նեիրում էր իւր պաշտելի Աստուծուն իւր քրտանց աշխատութեան պտուղները, հայցելով նորա հովանաւորութիւնը։

Բացի սորանից պատմագիրները վիշատակում են որ Անահտայ տօնին Հայերը՝ այդ դիցուհուն պատուելու և մեծարելու համար, ի միջի այլոց ընծայում էին և բոյսեր։ Այսպէս, Ագաթանգեղոսի ասելով՝ Տրդատ թագաւորը հրամայեց Գրիգորին (Լուսաւորչին) մատուցանել Անահտայ պատկերին ծաղկեայ պսակ և ծառերի թաւ ոստեր։ Բայց թէ այդ պսակը ո՞ր ծաղիկներից էր կազմւած, կամ թէ ինչ տեսակ բոյսերի թաւ ոստերից էր հիւսւած՝ այդ չէ վիշատակում պատմագիրը։ Բայց պատմական վիշատակարաններից օգուտ քաղելով կարող ենք հետևեալ բացատրութիւնը տալ այն բոյսերի ծաղիկների մասին։

Անահտայ ոսկէ արձանը կանգնած էր Մեծ և Փոքր Հայքի մէջ, Եկեղեաց գաւառի Սրիզայ աւանում, Դալ գետի մօտ։ Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանցը [1]) կարծում է որ այդ տեղը պէտք է լինի այժմեան Սատաղ գիւղը, ուր իրաւ մինչև ցայժմ գտնւում են հնութեան վիշատակներ։ Սատաղ գիւղը կանգնած է Աղ-գաղ կամ Սպիտակ լերան վերայ, ոչ հեռու Սրչնկայից, մի այնպիսի տեղում, որ վայել է այդ դիցուհու մնեհնին։ Այստեղից բացւում են երկու մեծ հովիտներ՝ մէկը դէպի փոքր՝ միւսը դէպի Մեծ Հայք և այնտեղ ի ցոյց երկու կողմերի բնակիչների պէտք է լինէր կանգնած Անահտայ ոսկէ արձանը։ Եթէ այս ենթադրութիւնը ճիշդ է, ուրեմն Անահտայ տաճարը մի այնպիսի տեղումն էր գտնւում, ուր Հայաստանի միջին և բարձրագոյն բուսաբերութեան տեսակները կարող էին լինել, որոնց մէջ գտնւում են բազմատեսակ ծաղիկներ ու բարձրաղէզ ծառեր։ «Աղբերաց շրթներէն կը քաղենք շուշան ու գիներբուկն, լերան կողերէն գաբն ու խաւարծիլ», ասում է Գարեգին եպիսկոպոսը նոյն երկասիրութեան մէջ։ Մեր նախնիքն էլ իրանց դիցուհուն պաշտելու և մեծարելու համար Սատաղ գիւղի մօտ և շուրջը կարող էին գտնել առատութեամբ վարդ ու հարանամատ, դեղին անթառամ, աղբերաց արիւն, նարգիզ, մանուշակ, պէս պէս շուշաններ, գիներբուկն, վառվռուկ, հոշոշ, մեծրաձուծ, եղածաղիկներ և այլն, որոնցից կարելի կը լինէր հիւսել դեղեցիկ պսակներ։ Իսկ ծառերից՝ կան կաղամախի, թեղջի, հացենիի,

տղկիի և ալաժահրի անտառներ։ Ուրեմն մեր նախնիք Անահտին փառաբանելու և նորա հովանաւորութիւնը հայցելու համար կարող էին այդ ծառերի թաւ ոստերը նուիրել իւրեանց դիցուհուն։

Բացի սորանից մեր նախնիքն ունէին և սրբազան պրակներ և անտառներ, որոց մասին Մ. Խորենացին լիշում է, ասելով թէ «Անուշաւան որ Սօս անուանէին, քանզի ձօնեալ էր ըստ պաշտմանց ի սօսին Արամանեկայ որ Արմաւիր, զորոց զսաղարթուցն սօսաւիւն ըստ հանդարտ կամ սաստիկ շնչելոյ օդոյն և եթ ոստոց շարժումն, սովորեցան ի հմայս աշխարհիս հայկազանց և այս բաղում ժամանակս։» [1]) Սորանից երևում է որ Սօսի ծառն և անտառը սրբազան էին համարւում և մեծարւում էին մեր նախնեաց կողմից իբրև իրանց բաղդի կամ վիճակի մասին կատարելու լարմար վայրեր։

Հեթանոս հայն պաշտում էր նոյնպէս բարտի ծառը, որովհեան Ներսէս Շնորհալին ընդհանրականի մէջ [2]), ուղղելով իւր խօսքը Արևորդիներին, ասում է «և զբարտի ծառն մի աւելի պաշտէք քան զուրին և զկաղամախին և զայլս ի ծառոց, քանզի այդ ծառ, որ բարտի անուանի ի կռապաշտութեան ժամանակին ի պաշտօն առեալ էր նոցա լորս և զկք մտանէին և ի մարդկանէ երկրպագութիւն ընդունէին»։

Ծաղիկներն ունէին նոյնպէս իրանց աստուածը. այդ էր հօրուտ-մօրուտ զեղեցիկ սպիտակ ծաղիկն, որ իրան հետ բերում էր դարունը՝ հեթանոս հայն ձմեռաւայ դժնդակ ու տաղտկալի անգործութիւնից սթափեցնող տարուան այդ պանծալի եղանակը։ Եւ ինչպէս չը պաշտէր հեթանոս հայն այդ զարնանաբեր ծաղիկն ապրելով Հայաստանի պէս սառը և ձիւնապատ երկրում։ Մի ոտանաւորի մէջ այսպէս է դիմաւորում բանաստեղծը այդ ծաղիկների դիցուհուն [3]).

Ես հօրուտիկ-մօրուտիկ
Դրախտի հիւսած նարօտիկ,
Նախչուն սիրուն խատուտիկ,
Կանաչ դաշտաց դիցուհիկ։

Ես հօրուտիկ-գարնան դիք
Ձեռումս դրախտի բանալիք,
Դրախտի դռներ բաց արի
Գարուն տամ ձեր աշխարհի և այլն։

Հեթանոս հայ ժողովուրդն՝ իւր գարնան դիցուհուն պաշտելուց զատ, սրբազան և նուիրական էր համարում և ուրիշ ծաղիկներ և խոտեր։ Այսպէս

---

[1]) Մ. Խորենացի, գիրք Ա, գլ. Ի։

[2]) Ընդհանրական Ն. Շնորհալւոյ, յաղագս Արևորդացն գրէ։

[3]) Հօրուտ-Մօրուտ, զարուն Հայոց աշխարհի, Սամուէլ Գիւլզադեանց. Մեղու Հայասանէ, № 25, 1884 թ.։

Մովսէս Խորենացւոյ բերած գուսանաց երգերի այս հատուածը թէ. «այլ և ասեն, տենչալ Սաթինիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտեց խաւարծի ի բարձէն Արգաւանայ» [1]), որ թէև մի քանի բառերի բուն նշանակութիւնը չիմանալու պատճառով, բոլոր թարգմանիչներից ապապէս է բացատրուած, սակայն այդ հատուածի մէջ մի քանի յատնի բոյսերի անուններ են լսւում, որ իւր ժամանակին Սաթինիկի ալրուած ու դառնացած սրտին սպեղանի պէտք է լինէին։ Ալանաց նազելի Սաթինիկն՝ Արտաւազդի բարք ու վարքից դառնացած՝ իւր ընտանեկան կեանքի համար, սաստիկ ցանկանում էր Արգաւանայ զոգից ստանալ՝ զարտախուր, խաւարտ և խաւարծիլ բոյսերի նորածիլ տերևները։ Բայց թէ ինչ նշանակութիւն ունէին այդ բոյսերն այն ժամանակ և ինչ խորհրդով էին գուսանաց երգերում դոքա երգւում, անկարելի է առ այժմ այս հարցերին բաւարար մեկնութիւն տալ [2])։

(վերջը միւս համարում)

---

[1]) Մ. Խորենացի, գիրք Ա, գլ. Լ.

[2]) Պ. Եփրեմ Դաւթեանը «Արձագանքի» 1886 թ. № 39, հիմնուելով հայոց լեզուի մի քանի արմատական բառերի և քերականական յայտնի կանոնների վերայ, փորձում է այդ հատուածին հեռևեալ բացատրութիւնը տալ՝ «Սաթենիկ տիկինը սաստիկ ցանկանում էր փայփայել Արգաւանայ արտաքուստ սամրապատ արտախուրը և նորա թաւշեայ բարձերի փունջը։ Սակայն հանգուցեալ պրոֆէսսոր Գ. Պատկանեանը իւր «Матеріалы для Армянскаго Словаря» (Հայ բառգրքի համար նիւթեր) մէջ, յիշեալ բառերը՝ զարտախուր, խաւարտ, խաւարծի համարում է բոյսեր և սոցանից զարտախուրը ենթադրում է պարսից զարդէի վարը, որ պարսկերի խոտ է գեղին ծաղկով և անուշ հոտով։